# Ց Ա Ն Կ

## 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| Պատասխանատու մարմինը | Գերակա խնդիրները | Գերակա խնդիրների լուծմանն ուղղված քայլեր |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| ՀՀ քաղաքաշինության նախարարություն | Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) վարկանիշային դասակարգման սանդղակում առնվազն հինգ քայլով Հայաստանի դիրքի բարձրացում | ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարձրացում ՀՀ կառավարության 2012 թվականի՝ «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի 4-րդ՝ «Շինարարական թույլտվություններ» բաղադրիչով քաղաքաշինության նախարարությանն ուղղված հանձնարարականների կատարման շրջանակներում |
| ՀՀ քաղաքաշինության նախարարություն | Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովում | Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած մոտ 1500 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված բնակարանային ապահովման ծրագրի իրականացում.<br>- ՀՀ կառավարության 10.06.1999թ. N432 և 13.11.2008թ. N1337-Ն որոշումների դրույթների համաձայն պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման |

| | | |
|---|---|---|
| | | ծրագրերի շրջանակներում բնակարանային պայմանները բարելավելու համար համապատասխան համայքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված քաղաքացիների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն.<br>- Ուսումնասիրության արդյունքներով բնակարանային պայմանները բարելավելու հավակնող անձանց ցուցակների հաստատում. |
| ՀՀ քաղաքաշինության նախարարություն | Շենքերի և շինությունների անվտանգությանն, սեյսմակայունությանն ու էներգաարդյունավե-տության ուղղված միջոցառումների իրականացում | - Շենքերի և շինությունների, շինարարական նյութերի և արտադրանքների անվտանգության տեխնիկական կանոնակարգի մշակում.<br>- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում էներգաարդյունավետ միջոցառումների կիրառմամբ մեկ բազմաբնակարան շենքի շինարարության փորձնական ծրագրի իրականացում: |

**ՀՀ քաղաքաշինության նախարար**

**Վ. Վարդանյան**